



**Էյ-ԷԳ Աուդիտ
AN Audit**

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ» ՓԲԸ

2013թ.

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Երևան-2014

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 5

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 7

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 8

2013թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ միակ բաժնետիրոջը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա՝ կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2013թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք սույն աուդիտորական եզրակացությանը կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք աուդիտորի վարքագծի կանոններին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից և ներառում է նաև ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ, և թե սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը՝ որքանով այն տեղին է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական այնպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաև ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

Մենք գտնում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի առ 31 դեկտեմբերի 2013թ. ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Հանգամանքների շեշտադրում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների 5.4 ծանոթագրությանը, որում նկարագրված են Ընկերության ապագա գործունեության անընդհատության հետ կապված անորոշությունները, մասնավորապես, պայմանավորված Ընկերության զուտ ակտիվների արժեքը կանոնադրական կապիտալից պակաս լինելու հանգամանքով:

Արթուր Հարությունյան

Տնօրեն

«ԷՅ-ԷՆ Աուդիտ» ՓԲԸ

Երևան

27 հունիսի 2014թ.


Լիդա Թադեոսյան

Աուդիտոր




Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	2013թ.	2012թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	45,987	24,931
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(7,602)	(5,915)
Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)		38,385	19,016
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	17	205
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(360)	(186)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտ (ծախս)		(343)	19
Արտարժույթի առուվաճառքից զուտ օգուտ (կորուստ)		(348)	(350)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)		(349)	2,912
Այլ եկամուտներ	9	3,438	186
Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ	8	(82,898)	(2,644)
Անձնակազմի գծով ծախսեր	10	(19,983)	(26,404)
Նյութական և ոչ նյութական ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա	16, 17	(6,064)	(3,262)
Այլ ծախսեր	11	(24,868)	(24,710)
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		(93,030)	(35,237)
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	12	19,516	7,371
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		(73,514)	(27,866)



Տնօրեն
Վահրամ Տիտիրյան





Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ

Ծան. 31.12.2013թ. 31.12.2012թ.

Ակտիվներ

Դրամական միջոցներ	14	2,316	9,690
Հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխառություններ	0	505,021	188,419
Հիմնական միջոցներ	16	95,685	10,106
Ոչ նյութական ակտիվներ	17	4,112	4,513
Հետաձգված հարկային ակտիվներ	13	25,776	-
Այլ ակտիվներ	18	15,943	158,415
Ընդամենը ակտիվներ		648,853	371,143


Պարտավորություններ և սեփական կապիտալ

Պարտավորություններ

Բաժնետերերից ստացված փոխառություններ	19	141,256	59,343
Հետաձգված հարկային պարտավորություններ	13	-	1,837
Այլ պարտավորություններ և պահուստներ	20	7,145	3,608
Ընդամենը պարտավորություններ		148,401	64,788


Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ	21	600,000	300,000
Լրացուցիչ վճարված կապիտալ	22	30,190	62,579
Զբաղիչված շահույթ (չձածկված վնաս)		(129,738)	(56,224)
Ընդամենը սեփական կապիտալ		500,452	306,355
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		648,853	371,143



Տնօրեն
Վահրամ Տիտիբյան






Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան

27 հունիսի 2014թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Լրացուցիչ վճարված կապիտալ	Ընդամենը
<i>Հազար դրամ</i>				
Մնացորդն առ 1 հունվարի 2012թ.	200,000	(28,358)	-	171,642
Կանոնադրական կապիտալի ավելացում՝ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ	100,000	-	-	100,000
Տարվա շահույթ (վնաս)	-	(27,866)	-	(27,866)
Բաժնետիրոջից ստացված երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառության անվանական և սկզբնական ճանաչման պահին որոշված իրական արժեքների տարբերություն՝ ներառյալ հետաձգված հարկերը	-	-	62,579	62,579
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012թ.	300,000	(56,224)	62,579	306,355

	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	Լրացուցիչ վճարված կապիտալ	Ընդամենը
<i>Հազար դրամ</i>				
Մնացորդն առ 1 հունվարի 2013թ.	300,000	(56,224)	62,579	306,355
Կանոնադրական կապիտալի ավելացում՝ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ	300,000	-	-	300,000
Տարվա շահույթ (վնաս)	-	(73,514)	-	(73,514)
Բաժնետիրոջից ստացված երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառության վաղաժամ ապաճանաչման արդյունքը (անվանական գումարի և ամորտիզացված արժեքի միջև տարբերություն)՝ ներառյալ հետաձգված հարկերը	-	-	(61,641)	(61,641)
Բաժնետիրոջից ստացված երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառության անվանական և սկզբնական ճանաչման պահին որոշված իրական արժեքների տարբերություն՝ ներառյալ հետաձգված հարկերը	-	-	29,252	29,252
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013թ.	600,000	(129,738)	30,190	500,452


Տնօրեն

Վահրամ Տիտիրյան






Գլխավոր հաշվապահ


Արթուր Թորոսյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	2013թ.	2012թ.
<i>Հազար դրամ</i>		
Շահույթ (վնաս) մինչև հարկումը	(93,030)	(35,237)
Ճշգրտումներ		
Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստ	82,898	2,644
Մաշվածություն և ամորտիզացիա	6,064	3,263
Հաշվեգրված, բայց դեռևս չստացված տոկոսներ	7,809	(627)
Հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսներ	4,006	1,417
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)	349	(2,911)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	8,096	(31,451)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
<i>Ավելացում (նվազում) գործառնական ակտիվներում</i>		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(371,469)	(95,873)
Այլ ակտիվներ	6,379	7,376
<i>Ավելացում (նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Այլ պարտավորություններ	3,205	1,603
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր մինչև շահութահարկի վճարումը	(353,789)	(118,345)
Վճարված շահութահարկ	(257)	-
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(354,046)	(118,345)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման համար	(403)	(117,450)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման համար	(99)	(4,750)
Հետ ստացված կանխավճարներ	9,637	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	9,135	(122,200)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված փոխառություններից	227,867	136,271
Կանոնադրական կապիտալի համալրումից	109,000	100,000
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	336,867	236,271
Դրամական միջոցների զուտ ներհոսք (արտահոսք)	(8,044)	(4,274)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	9,690	12,153
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա	670	1,811
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	2,316	9,690


 Տնօրեն
Վահրամ Տիտիբյան




 Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան

2013թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2010թ. մայիսի 28-ին վարկային կազմակերպության հիմնադիր՝ ԱՄՆ քաղաքացի Վահե-Վասկեն Յաքոբյանի հիմնադիր որոշմամբ և գրանցվել է 2010թ. նոյեմբերի 9-ին ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ ՀՀ ԿԲ) կողմից:

Անվանումը՝	«Կրեդիտ Կորպ ՈՒՎԿ» ՓԲԸ
Գրանցման համարը՝	36
Գրանցման վկայական՝	108
Գրանցման ամսաթիվը՝	09.11.2010թ.
Ապահովագրական գործակալի հաշվառման վկայական՝	5076
Հաշվառման ամսաթիվ՝	09.12.2011թ.
Գտնվելու վայրը և գործունեության հասցեն՝	0010, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 7-11
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	01848137

Ընկերությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքին, այլ իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան և վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ Ընկերության 100% բաժնետոմսերը պատկանում են ՀՀ քաղաքացի Վարդան Վարդանյանին (31 դեկտեմբերի 2012թ.՝ Անդրանիկ Վարդանյանին):

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը, իրականացնում է Ընկերության տնօրենների խորհուրդը: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը, ով հաշվետու է Ընկերության տնօրենների խորհրդին և բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրված վերստուգողի կողմից:

Ընկերության հիմնական գործունեությունը սպառողական, հիփոթեքային և առևտրային վարկերի տրամադրումն է, ինչպես նաև «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով և ենթաօրենսդրական իրավական ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար թույլատրված այլ գործունեության իրականացումը:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բուզանդի 7-11 հասցեում տեղակայված գլխամասային գրասենյակում:

Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 9 հոգի (31 դեկտեմբերի 2012թ.՝ 12 հոգի):

2. Պատրաստման հիմունքները

2.1. Հայտարարություն համապատասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») և այլ իրավական ակտերին համապատասխան:

2.2. Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են չափման հետևյալ հիմունքների օգտագործմամբ՝

- ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումը՝ իրական արժեքի հիմունքով՝ հաշվի առնելով գործարքի հետ կապված ծախսումները, իսկ հետագա չափումը՝ ամորտիզացված արժեքի հիմունքով
- ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4. Գնահատումների և դատողությունների օգտագործումը

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ է, որ ղեկավարությունը կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են այդ գնահատումներից տարբեր լինել:

Գնահատումներն ու դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակական հիմունքով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումների արդյունքները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդում են:

2.5. Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2014թ. հունիսի 27-ին Ընկերության տնօրեն Վահրամ Տիտիբյանի և գլխավոր հաշվապահ Արթուր Թորոսյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.1. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է, երբ տեղի է ունեցել ապագա տնտեսական օգուտների նվազում՝ կապված ակտիվների ավելացման կամ պարտավորությունների նվազման հետ, որը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է, երբ տեղի է ունեցել ապագա տնտեսական օգուտների նվազում՝ կապված ակտիվների նվազման կամ պարտավորությունների ավելացման հետ, որը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Ընկերության հիմնական եկամուտը գոյանում է տրամադրված վարկերից ստացվող տոկոսներից:

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարներից եկամուտները, գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում՝ կիրառելով ադյունավետ տոկոսադրույքը, որն այն դրույքն է, որը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետի ընթացքում գնահատված ապագա դրամական ներհոսքերը ճշգրիտ կերպով զեղչում է մինչև այդ ակտիվի՝ սկզբնական ճանաչման պահի զուտ հաշվեկշռային արժեքը:

Երբ ֆինանսական ակտիվի կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի արժեքը նվազեցվել է արժեզրկումից կորստի արդյունքում, դրանից հետո տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել է՝ արժեզրկման կորուստը չափելու նպատակով ապագա դրամական միջոցների հոսքերը զեղչելու համար:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Կոմիսիոն վճարները, բացառությամբ վարկերի տրամադրման և սպասարկման համար գանձվող վճարների (տես վերը՝ տոկոսային եկամուտների և ծախսերի ներքո), և այլ եկամտային ու ծախսային հոդվածները ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ համապատասխան ծառայությունների մատուցման ընթացքում:

3.2. Արտարժույթով գործարքներ և արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.3. Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գուդվիլից,

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ

բ) ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք նույն կամ տարբեր ժամանակաշրջանում ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց,

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

3.4. Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և չափում

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Սկզբնական ճանաչման պահին «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է իր իրական արժեքով, իսկ մնացած բոլոր ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները՝ իրական արժեքով՝ գումարած տվյալ ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները:

Սկզբնական ճանաչումից հետո այլ Ընկերությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումները, որոնք Ընկերությանը այդ Ընկերությունների նկատմամբ տալիս են նշանակալի ազդեցություն, վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն, Ընկերության առանձին ֆինանսական հաշվետվություններում չափվում են ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Նման իրավունք (ազդեցություն) չափահավող ներդրումները բաժնային գործիքներում, ներառյալ՝ այդպիսի գործիքների հետ կապված աճանցյալները, չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել: Այդպիսիք չափվում են սկզբնական արժեքով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, ինչպես նաև վաճառքի համար մատչելի (ՎՀՄ) ֆինանսական ակտիվները (բացառությամբ բաժնային գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև այդպիսի բաժնային գործիքների հետ կապված աճանցյալ գործիքներ) սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ ստորև նշվածի:

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՎՀՄ ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այդ փոփոխության մեջ հեջավորված ռիսկին վերագրվող մասի, փոխարժեքային տարբերությունների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի և բաժնային գործիքների գծով հայտարարված շահաբաժինների, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտները կամ կորուստները որպես վերադասակարգման ճշգրտում հանվում են սեփական կապիտալից և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկված է: Եթե գոյություն ունի որևէ նման վկայություն, ապա Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողին հայտնի դարձած դիտարկելի տվյալները կորստի հետևյալ դեպքերի վերաբերյալ՝

- ա) թողարկողի կամ փոխառուի (վարկառուի) նշանակալի ֆինանսական դժվարությունները.
- բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.
- գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ իրավական պատճառներով, փոխատուի կողմից փոխառուին զիջումների տրամադրումը, որը փոխատուն այլապես չէր նախատեսի.
- դ) փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորում.
- ե) ֆինանսական դժվարությունների հետևանքով այդ ֆինանսական ակտիվի համար գործող շուկայի վերացումը. կամ
- զ) դիտարկելի տվյալներ՝ այն մասին վկայող, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով, ներառյալ՝
 - զ1) խմբում փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները (օրինակ՝ վճարումների ուշացումների թվի ավելացումը կամ վարկային քարտերով փոխառուների թվի ավելացումը, որոնք հասել են իրենց պարտքային սահմանաչափին և կատարում են նվազագույն ամսական վճարում). կամ
 - զ2) ազգային կամ տեղական տնտեսական պայմանները, որոնք կոռելիացիայի մեջ են խմբի ակտիվների գծով ձախողումների հետ (օրինակ՝ փոխառուների աշխարհագրական շրջանում գործազրկության մակարդակի աճը, համապատասխան շրջանում հիփոթեկային անշարժ գույքի գների նվազումը, նավթի գնի նվազումը նավթարտադրողներին տրամադրած փոխառության գծով ակտիվների դեպքում, կամ արդյունաբերության ճյուղի պայմանների բացասական փոփոխությունները, որոնք ազդում են խմբի փոխառուների վրա):

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության պարտքային վարկանիշի իջեցումը, որպես այդպիսին, արժեզրկման վկայություն չէ՝ չնայած այն կարող է հանդիսանալ արժեզրկման վկայություն՝ դիտարկվելով այլ առկա տեղեկատվության հետ մեկտեղ: Ֆինանսական ակտիվի իրական արժեքի նվազումը իր սկզբնական արժեքից կամ ամորտիզացված արժեքից ցածր պարտադիր չէ, որ հանդիսանա արժեզրկման վկայություն (օրինակ՝ պարտքային գործիքում ներդրման իրական արժեքի նվազումը, որն անոռիսկ տոկոսադրույքի աճի արդյունք է):

Արժեզրկման անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Սկզբնական արդյունավետ տոկոսադրույք չունեցող գործիքների դեպքում զեղչումն իրականացվում է համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ նվազեցնելով ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ օգտագործելով կարգավորող հաշիվ:

Եթե փոխառության, վարկի, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման պայմանները վերանայվում են բանակցությունների արդյունքում կամ մեկ այլ ձևով վերափոխվում են փոխառուի կամ թողարկողի ֆինանսական դժվարությունների պատճառով, ապա արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով մինչև պայմանների վերափոխումը սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի հետ կապված դրամական միջոցների հոսքերը չեն զեղչվում, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

Փոփոխական տոկոսադրույքով փոխառության, դեբիտորական պարտքի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրման արժեզրկումից կորստի չափման նպատակով որպես զեղչման դրույք օգտագործվում է պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով առկա է դիտարկելի շուկայական գին, ապա այդ ակտիվի արժեզրկումից կորուստը կարող է չափվել այդ դիտարկելի շուկայական գնով որոշված իրական արժեքի հիման վրա:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը չափելու նպատակով հաշվի են առնվում այն դրամական միջոցների հոսքերը, որոնք կարող են առաջանալ գրավի առարկայի իրացումից՝ հանած գրավը ստանալու և վաճառելու ծախսումները՝ անկախ այն բանից, թե արդյոք հավանական է գրավի առարկայի բռնագանձումը:

Արժեզրկման հավաքական գնահատման նպատակով՝ ֆինանսական ակտիվները խմբավորվում են պարտքային ռիսկի համանման բնութագրերի հիման վրա, որոնք ցույց են տալիս փոխառուների կարողությունը վճարելու բոլոր վճարվելիք գումարները ըստ պայմանագրային պայմանների (օրինակ՝ պարտքային ռիսկի գնահատման կամ դասակարգման գործընթացի հիման վրա, որը հաշվի է առնում ակտիվի տեսակը, արդյունաբերության ճյուղը, աշխարհագրական տեղամասը, գրավի տեսակը, ժամկետանցության կարգավիճակը և այլ առնչվող գործոններ): Ընտրված բնութագրերը պետք է տեղին լինեն այդպիսի ակտիվների խմբերի գծով ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար այն առումով, որ ցուցանշեն փոխառուների կարողությունը՝ վճարելու բոլոր վճարվելիք գումարները՝ ըստ պայմանագրային պայմանների: Այնուամենայնիվ, կորստի հավանականությունները և կորստին առնչվող այլ վիճակագրական ցուցանիշները խմբի մակարդակով տարբերվում են ստորև նշվածների միջև. (ա) այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին գնահատվել է, և պարզվել է, որ արժեզրկված չեն և (բ)

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

այն ակտիվների, որոնց արժեզրկվածությունը առանձին չի գնահատվել: Նման տարբերության արդյունքում կարող է պահանջվել արժեզրկման մեկ այլ գումար: Եթե Ընկերությունը չունի համանման ռիսկային բնութագրերով ակտիվների խումբ, ապա այն լրացուցիչ գնահատում չի իրականացնում:

Խմբային հիմունքով ճանաչված արժեզրկումից կորուստները ներկայացնում են միջանկյալ քայլ, մինչև տեղի կունենա հավաքական հիմունքով գնահատվող ֆինանսական ակտիվների խմբի առանձին ակտիվների գծով արժեզրկումից կորուստների հնարավոր բացահայտումը: Հենց որ հասանելի է դառնում տեղեկատվություն, որով կոնկրետ որոշվում են խմբի առանձին արժեզրկված ակտիվների գծով կորուստները, այդ ակտիվները դուրս են բերվում խմբից:

Հավաքական հիմունքով արժեզրկված լինելու տեսանկյունից գնահատվող ֆինանսական ակտիվների խմբի ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են խմբի ակտիվներին պարտքային ռիսկի բնութագրերով համանման ակտիվների գծով կորուստների առաջացման անցյալ փորձի հիման վրա: Անցյալ կորուստների վերաբերյալ սեփական փորձի բացակայության կամ անբավարարության դեպքում, օգտագործում են համանման Ընկերությունների ֆինանսական ակտիվների համադրելի խմբերի գծով փորձը: Կորուստների անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա՝ արտացոլելու համար ընթացիկ այն պայմանների ազդեցությունը, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածի վրա, որի վրա հիմնված է կորուստների անցյալ փորձը, և բացառելու համար անցյալ ժամանակահատվածի այն պայմանները, որոնք ներկայումս գոյություն չունեն: Ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների գնահատականները արտացոլում են և ուղղվածությամբ հետևողական են առնչվող դիտարկելի տվյալների փոփոխություններին՝ ժամանակահատվածից ժամանակահատված (ինչպիսիք են գործազրկության մակարդակի, անշարժ գույքի գների, ապրանքների գների, վճարումների կարգավիճակի կամ այլ գործոնների փոփոխությունը, որոնք ցույց են տալիս խմբի կրած կորուստները և դրանց չափը): Ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են՝ կորստի գնահատականների և կորստի փաստացի փորձի միջև որևէ տարբերությունները նվազեցնելու համար:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ այն՝

ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ

բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ կամ ավելի ստացողների (վերջնական ստացողներ) վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններին.

բ1) Ընկերությունը պարտականություն չունի գումարներ վճարելու վերջնական ստացողներին, եթե այն չի հավաքագրում համարժեք գումարներ սկզբնական ակտիվից: Ընկերության կողմից մայր գումարի

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի ամբողջությամբ հետ ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը.

բ2) փոխանցման պայմանագրի պայմաններով Ընկերությանը արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը, բացառությամբ վերջնական ստացողների մոտ գրավադրման՝ որպես դրամական միջոցների հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում.

բ3) Ընկերությունը պարտականություն ունի վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման փոխանցել իր կողմից հավաքված ցանկացած դրամական միջոցների հոսքեր: Ի լրումն՝ Ընկերությունն այդպիսի դրամական միջոցների հոսքերը վերաներդնելու իրավունք չունի, բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներդրումների, որոնք կատարվում են վերջնահաշվարկի այն կարճ ժամանակահատվածի ընթացքում, որը ընկնում է հավաքման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև, և երբ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Ընկերությունը ապաճանաչում է փոխանցված ֆինանսական ակտիվը, եթե՝

ա) փոխանցվել են նաև ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ

բ) ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները ոչ փոխանցվել, ոչ էլ պահպանվել են, սակայն Ընկերությունը չի պահպանել ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականությունը ճանաչվում է առանձին որպես ակտիվ կամ պարտավորություն:

Եթե Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը՝ դրանում իր շարունակվող ներգրավվածության չափով:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը հաշվի է առնվում որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության (ակտիվի) կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) հաշվառվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության (ակտիվի) մարում և նոր ֆինանսական պարտավորության (ակտիվի) ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության կամ ակտիվի (կամ ֆինանսական պարտավորության կամ ակտիվի մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված կամ ստացված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.5. Վարձակալություն

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալության ներքո պահվող ակտիվները սկզբնապես ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ՝ վարձակալության սկզբի դրությամբ դրանց իրական արժեքով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է: Վարձատուի նկատմամբ համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձակալական վճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալության գծով պարտավորության նվազեցման միջև այնպես, որ պարտավորության չմարված մնացորդի նկատմամբ ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք: Ֆինանսական ծախսերն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դրանք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվներին, որի դեպքում դրանք կապիտալացվում են՝ փոխառության ծախսումների գծով Ընկերության ընդհանուր քաղաքականությանը համապատասխան: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջաններում, երբ դրանք առաջանում են:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը: Գործառնական վարձակալության ներքո առաջացող պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Այն դեպքում, երբ խրախուսող պայմաններ են ստացվում գործառնական վարձակալության պայմանագիր կնքելու համար, այդ խրախուսող վճարները ճանաչվում են որպես պարտավորություն: Խրախուսող պայմաններից ամբողջ օգուտը ճանաչվում է որպես վարձակալական ծախսի նվազեցում գծային հիմունքով, բացառությամբ, երբ մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալված ակտիվի տնտեսական օգուտների սպառման ժամանակային գրաֆիկը:

3.6. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	1 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Դեպոզիտային պահախցիկներ	10 տարի
Վարձակալված անշարժ գույքի վրա կապիտալացված ծախս	10 տարի
Գույք, գրասենյակային սարքավորումներ և այլ հիմնական միջոցներ	1-5 տարի

3.7. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հաշվապահական ծրագրեր	10 տարի
Այլ համակարգչային ծրագրեր	1 տարի

3.8. Պահուսպներ

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.9. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- ա) աշխատավարձը,
- բ) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը,
- գ) պարգևավճարները

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից՝ ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝

- ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և

բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

3.10. Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային ամսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռային ամսաթիվը կամ այդ ամսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային ամսաթիվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

3.11. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, եթե գոյություն ունի ճանաչված գումարիների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

3.12. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվների ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը (որոնք այն ակտիվներն են, որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված, որպեսզի պատրաստ լինեն, ըստ նշանակության, օգտագործման կամ վաճառքի համար), ավելացվում են այդ ակտիվների ինքնարժեքին կամ կառուցման պայմանագրի ծախսումներին, մինչև որ ակտիվներն, ըստ էության, պատրաստ են դառնում դրանց մտադրված օգտագործման կամ վաճառքի համար:

Հատուկ որակավորվող ակտիվի համար ձեռք բերված փոխառության ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումից ստացված եկամուտը նվազեցվում է այդ ակտիվի վրա կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներից: Ոչ հատուկ՝ ընդհանուր նպատակներով օգտագործվող փոխառությունների գծով կապիտալացման ենթակա ծախսումները որոշվում են կապիտալացման դրույքը բազմապատկելով ակտիվի (կառուցման պայմանագրի) վրա կատարված ծախսումներով: Կապիտալացման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում բոլոր փոխառությունների (բացի հատուկ փոխառություններից) գծով միջին կշռված տոկոսն է:

Փոխառության մյուս ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

3.13. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է ակտիվի կամ դրամաստեղծ միավորի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից և օգտագործման արժեքից առավելագույնը: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

գումարը: Չվերագնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

4.1. Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ՖՀՄՍ-ներ

Հրապարակված, բայց մինչև Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների հրապարակումն ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որն Ընկերության կանխատեսումներով կօգտագործվի իր կողմից հետագայում: Ընկերությունը պատրաստվում է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

- «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ը (հրապարակվել է 2009թ. նոյեմբերին) պարտադիր կիրառման ենթակա է 2015թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը կիրառվում է հետընթաց, սակայն 2012թ. հունվարի 1-ից առաջ սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար Ընկերությունը կարող է որոշել չվերաներկայացնել համեմատական տեղեկատվությունը: Ստանդարտը ներմուծում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր պահանջներ, որոնք փոխարինում են «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ՀՀՄՍ 39-ում ներառված պահանջներին: Ընկերությունը ստանդարտը կիրառելու է 2015թ. հունվարի 1-ից:
- «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում» ՀՀՄՍ 32-ի փոփոխությունները ներառում են ուղեցույց ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման համար ՀՀՄՍ 32-ի չափանիշների կիրառման ընթացքում անհամապատասխանությունների վերաբերյալ հետևյալ երկու բնագավառներում.
 - «Տվյալ պահին ունի հաշվանցման իրավաբանորեն ամրագրված իրավունք» դրույթի իմաստը. Փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվանցման իրավունքը պետք է իրավաբանորեն ամրագրված լինի Ընկերության բնականոն գործունեության ընթացքում, Ընկերության և բոլոր մնացած կողմերի անվճարունակության և սնանկացման դեպքում, և այդ իրավունքը պետք է առկա լինի բոլոր կողմերի համար:
 - Քանի որ գործնականում ՀՀՄՍ 32-ում առկա «միաժամանակյա մարման» մեկնաբանության գործնական կիրառման մեջ առկա էր բազմազանություն, ուստի ՀՀՄՍԽ-ն պարզաբանեց զուտ մարման սկզբունքը և ներառեց համախառն մարման համակարգի օրինակ՝ ՀՀՄՍ 32-ի զուտ մարման չափանիշին բավարարող բնութագրիչներով:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2014թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և ենթակա են հետընթաց կիրառման:

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

- «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 36-ի փոփոխությունները վերաբերում են արժեզրկված ակտիվների փոխհատուցվող գումարների բացահայտման նոր պահանջներին, եթե այդ գումարը որոշվել է ակտիվի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները:
- «Գանձույթներ» ՓՀՄՄԿ Մեկնաբանություն 21-ն իրենից ներկայացնում է «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ՀՀՄՍ 37-ի մեկնաբանությունը: ՀՀՄՍ 37-ը չափանիշներ է սահմանում պարտավորության ճանաչման համար, որոնցից մեկն այն է, որ պետք է լինի ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք (հայտնի է որպես պարտավորեցնող դեպք): Մեկնաբանությունը հստակեցնում է, որ գանձույթ վճարելու անհրաժեշտություն առաջացնող պարտավորեցնող հանգամանքը ենթադրում է համապատասխան օրենսդրական ակտերում բնութագրված այնպիսի գործունեության իրականացում, որն առաջացնում է գանձույթի վճարման անհրաժեշտություն:
- «Գնորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ը (հրապարակվել է 2014թ. մայիսին) պարտադիր կիրառման ենթակա է 2017թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Ստանդարտը փոխարինում է հետևյալ ստանդարտներին ու մեկնաբանություններին.
 - «Կառուցման պայմանագրեր» ՀՀՄՍ 11,
 - «Հասույթ» ՀՀՄՍ 18,
 - «Հաճախորդի հավաքարձության ծրագրեր» ՖՀՄՄԿ 13,
 - «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր» ՖՀՄՄԿ 15,
 - «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից» ՖՀՄՄԿ 18,
 - «Հասույթ. բարդերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ» ՄՄԿ 31:

Ընկերության նախնական գնահատականներով նոր ստանդարտների (բացի ՖՀՄՍ 15-ից) կիրառումն էական ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա առաջին անգամ կիրառման ժամանակաշրջանում:

4.2. Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում

Որոշ նոր ստանդարտներ կամ ստանդարտների փոփոխություններ ուժի մեջ են մտել՝ սկսած 2013թ. հունվարի 1-ից, որոնք առաջին անգամ կիրառվել են Ընկերության կողմից 2013թ. հունվարի 1-ից:

- Փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում (հրապարակված է 2011թ. մայիսին) ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից: Փոփոխություններով հստակեցվում է, որ Ընկերությունից պահանջվում է նախորդ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ներկայացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (երրորդ հաշվետվությունը ֆինանսական վիճակի մասին), երբ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության հետընթաց կիրառումը, հետընթաց վերահաշվարկը կամ վերադասակարգումն էական ազդեցություն ունի ֆինանսական վիճակի մասին երրորդ հաշվետվությունում պարունակվող տեղեկատվության վրա, և բացի այդ, չի պահանջվում, որ այդ երրորդ հաշվետվությանը կցվեն ծանոթագրություններ:
- «Իրական արժեքի չափումը» ՖՀՄՍ 13-ը սահմանում է, թե ինչպես պետք է գնահատել ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքն այն դեպքում, երբ իրական արժեքով գնահատումն անհրաժեշտ է կամ թույլատրելի է ՖՀՄՍ-ներին համաձայն: Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ իրական արժեքը սահմանվում է որպես գին, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Արդյունքում Ընկերությունը վերանայել է իրական արժեքի չափմանը վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և կատարել լրացուցիչ բացահայտումներ, որոնք պահանջվում են ՖՀՄՍ 13-ով:

Ստանդարտի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների վրա: Պատմական փորձի և տվյալ պայմաններում հիմնավորված այլ գործոնների վրա հիմնված գնահատումներն ու դրանց հետ կապված ենթադրությունները հնարավորություն են տալիս դատողություններ անել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք հնարավոր չէ որոշել այլ աղբյուրներից: Բոլոր դեպքերում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացված են ստորև:

5.1. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Իր սովորական գործունեության ընթացքում Ընկերությունն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Ընկերությունը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Ընկերությունը պարբերաբար հետևում է բաժնետերերի վերահսկողությանն ու նշանակալի մասնակցությանն այլ ընկերությունների կապիտալներում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուր գործընկերոջ հետ գործարքի ծավալները:

5.2. Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և ակտիվի «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից առավելագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ այն ժամանակաշրջանում, որում նվազումը տեղի է ունեցել: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, նախկինում ճանաչված արժեզրկումն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Դեբիտորական պարտքերի համար արժեզրկման պահուստը հիմնված է ղեկավարության՝ յուրաքանչյուր հաճախորդի պարտքի հավաքելիության գնահատականի վրա: Եթե կա հիմնական հաճախորդի վարկունակության նվազում, կամ եթե փաստացի ժամկետանց գումարներն ավելի շատ են, քան կանխատեսումները, իրական դեբիտորական պարտքերը կարող են տարբերվել այդ գնահատականներից:

Եթե ղեկավարությունը որոշում է, որ անհատապես գնահատվող դեբիտորական պարտքերի գծով, լինի դա նշանակալի, թե՛ ոչ, ոչ մի օբյեկտիվ հայտանիշ արժեզրկման համար չկա, այն ներառվում է դեբիտորական

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

պարտքերում՝ նման պարտքային ռիսկի բնութագրեր ունեցող դեբիտորական պարտքերի խմբում և կատարվում է դրանց արժեզրկման խմբային գնահատում:

Վարկերի և այլ փոխառությունների գծով արժեզրկումից պահուստներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխառությունները՝ որոշելու համար, թե արդյոք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների: Նշանակալի վարկերի և փոխառությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Ընկերությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի են առնվում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ռիսկային ցուցանիշների վատթարացումը արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

5.3. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնտեսական, ֆիզիկական կամ տեխնոլոգիական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ու սպասարկման պլաններից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

5.4. Անընդհատություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության (սկզբունքի) հիման վրա: Անընդհատության սկզբունքը ենթադրում է, որ Ընկերության գործունեությունը տեսանելի ապագայում շարունակվելու է, և այն դադարեցնելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա: Թեև Ընկերության գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքերի և շահույթի ցուցանիշները բացասական են, սակայն Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ այդ հանգամանքը չի կարող սպառնալիք հանդիսանալ Ընկերության գործունեության շարունակականության համար: Շահութաբերությունը բարելավելու նպատակով Ընկերությունը ընդլայնում է իր վարկային պորտֆելը: Տարվա ընթացքում կանոնադրական կապիտալի ավելացումից, ինչպես նաև բաժնետիրոջից ստացված փոխառությունից ներգրավված դրամական միջոցները ուղղվել են այդ նպատակին, ինչով և պայմանավորված է գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքերի բացասական լինելը:

Ընկերության զուտ ակտիվները հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ պակաս են եղել Ընկերության կանոնադրական կապիտալից, և այդ պարագայում Ընկերությունը պարտավոր է նվազեցնել

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

կանոնադրական կապիտալը: Քաննի որ Ընկերությունը չի իրականացրել կանոնադրական կապիտալի նվազեցում, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև լիազորված պետական մարմիններն իրավունք ունեն դատական կարգով պահանջել Ընկերության լուծարում: Սակայն Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ նման բան տեղի չի ունենա, քանզի Ընկերությունը պատշաճորեն կատարում է իր բոլոր պարտավորությունները պետության և պարտատերերի առջև, իսկ բաժնետերերը անհրաժեշտության դեպքում ապահովում են Ընկերության ֆինանսավորումը: Ուստի, այս հանգամանքը ևս սպառնալիք չի հանդիսանում անընդհատության վկայունքի համար:

6. Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)

Հազար դրամ

Տոկոսային եկամուտներ

Հաճախորդներին տրամադրված վարկերից

Բանկային հաշիվներից

Ընդամենը տոկոսային եկամուտներ

Տոկոսային ծախսեր

Բաժնետիրոջից ներգրավված փոխառություններից

Ընդամենը տոկոսային ծախսեր

Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)

	2013թ.	2012թ.
	45,497	24,607
	490	324
Ընդամենը	45,987	24,931
	7,602	5,915
Ընդամենը	7,602	5,915
Զուտ տոկոսային եկամուտ (ծախս)	38,385	19,016

7. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ (ծախս)

Հազար դրամ

Ապահովագրական գործակալությունից միջնորդավճարներ

Սպասարկման վճարներ

Այլ միջնորդավճարներ

Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

Բանկային ծառայություններ

ԱՔՌԱ-ի ծառայություններ

Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս

Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ (ծախս)

	2013թ.	2012թ.
	17	205
	-	-
	-	-
Ընդամենը	17	205
	237	64
	123	122
Ընդամենը	360	186
Զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ (ծախս)	(343)	(19)

8. Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ

Հազար դրամ

Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (Ծանոթ. 15.4)

Դեբիտորական պարտքեր՝ ներառյալ տրված կանխավճարները (Ծանոթ. 18.1)

Ընդամենը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ

	2013թ.	2012թ.
	46,595	2,644
	36,303	-
Ընդամենը	82,898	2,644

9. Այլ եկամուտներ

Հազար դրամ

Տույժերից և տուգանքներից եկամուտներ

Ընդամենը այլ եկամուտներ

	2013թ.	2012թ.
	3,438	186
Ընդամենը	3,438	186

10. Անձնակազմի գծով ծախսեր

Հազար դրամ

Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ

Սոցիալական ապահովագրության հատկացումներ

Անձնակազմի ուսուցման ծախսեր

Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր

	2013թ.	2012թ.
	19,919	23,632
	-	2,522
	64	250
Ընդամենը	19,983	26,404

11. Այլ ծախսեր

Հազար դրամ	2013թ.	2012թ.
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	-	1,179
Ոչ նյութական ակտիվների սպասարկման ծախսեր	2,655	750
Գործուղման ծախսեր	-	1,039
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	1,185	1,118
Վարձակալության գծով ծախսեր	9,600	9,867
Հարկեր (բացի շահութահարկից) և պետական տուրքեր	887	505
Խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	1,000	800
Ներկայացուցչական ծախսեր	199	90
Գրասենյակային ծախսեր	1,505	1,197
Ապահովագրական ծախսեր	65	42
Վառելիքի ծախսեր	121	839
Անվտանգության գծով ծախսեր	6,460	7,233
Տույժեր և տուգանքներ	137	-
Այլ ծախսեր	1,054	51
Ընդամենը այլ ծախսեր	24,868	24,710

12. Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)

Հազար դրամ	2013թ.	2012թ.
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքով	-	-
Հետաձգված հարկի գծով եկամուտ (ծախս)՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետ (Ծանոթ. 13)	19,516	7,371
Ընդամենը շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	19,516	7,371

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 20% է (2012թ.՝ 20%):

Շահութահարկի փաստացի (գործող) տոկոսադրույքի համապատասխանեցում.

Հազար դրամ	2013թ.	%	2012թ.	%
Շահույթ նախքան հարկումը	(93,030)		(35,237)	
Շահութահարկ՝ հարկի կիրառվող դրույքով	(18,606)	20.0	(7,047)	20.0
Զուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	(910)	1.0	(324)	0.9
	(19,516)	21.0	(7,371)	20.9

13. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հազար դրամ	01.01.13թ.	2013թ.-ին ճանաչված շահույթում կամ վնասում	2013թ.-ին ճանաչված սեփական կապիտալում	31.12.13թ.
Հետաձգված հարկային ակտիվներ				
Հարկային վնասից	13,885	10,271	-	24,156
Պահուստներ	334	(36)	-	298
Վարձակալված անշարժ գույքի վրա կապիտալացված ծախս	-	24	-	24
Դեբիտորական պարտքեր (այդ թվում՝ տրված կանխավճարներ) և բանկային հաշիվներ	-	6,531	-	6,531
Տրամադրված վարկեր և փոխառություններ	-	2,034	-	2,034
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	14,219	18,824	-	33,043
Հաճախորդներին տրամադրված վարկեր	(133)	133	-	-
Բաժնետիրոջից ստացված փոխառություններ	(15,592)	228	8,097	(7,267)
Դեբիտորական պարտքեր (այդ թվում՝ տրված	(331)	331	-	-

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

կանխավճարներ) և բանկային հաշիվներ

Ընդամենը հետաձգված հարկային

պարտավորություններ

(16,056) 692 8,097 (7,267)

Չուտ հետաձգված հարկային ակտիվներ

(պարտավորություններ)

(1,837) 19,516 8,097 25,776

Հազար դրամ

Հետաձգված հարկային ակտիվներ

Հարկային վնասից

6,323 7,562 - 13,885

Պահուստներ

230 104 - 334

Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ

6,553 7,666 - 14,219

Դեբիտորական պարտքեր և բանկային հաշիվներ

(116) (215) - (331)

Հաճախորդներին տրամադրված վարկեր

- (133) - (133)

Բաժնետիրոջից ստացված փոխառություններ

- 53 (15,645) (15,592)

Ընդամենը հետաձգված հարկային

պարտավորություններ

(116) (295) (15,645) (16,056)

Չուտ հետաձգված հարկային ակտիվներ

(պարտավորություններ)

6,437 7,371 (15,645) (1,837)

01.01.12թ. 2012թ.-ին ճանաչված շահույթում կամ վնասում 2012թ.-ին ճանաչված սեփական կապիտալում 31.12.12թ.

14. Դրամական միջոցներ և ոչ դրամային գործարքներ

14.1. Դրամական միջոցների մնացորդներ

Հազար դրամ

31.12.2013թ. 31.12.2012թ.

Կանխիկ դրամ դրամարկղում

924 1,766

Պահանջներ բանկերի նկատմամբ

1,392 7,924

Ընդամենը դրամական միջոցներ և բանկային հաշիվներ

2,316 9,690

Նշված ամսաթվերի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում չկա:

14.2. Ոչ դրամային գործարքներ

Հազար դրամ

2013թ. 2012թ.

Կապված ներդրումային գործունեության հետ՝

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում՝ բաժնետոմսերի

տեղաբաշում՝ բաժնետիրոջից ստացված փոխառության գծով

պարտավորությունների հաշվանցմամբ

191,000 -

15. Հաճախորդներին տրամադրված վարկեր

Հազար դրամ

31.12.2013թ. 31.12.2012թ.

Հաճախորդներին տրամադրված վարկեր

555,223 192,026

Արժեզրկումից պահուստ վարկերի գծով (Ծանոթ. 15.3)

(50,202) (3,607)

Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

505,021 188,419

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրամադրված վարկերում ներառված հաշվեգրված տոկոսները կազմել են՝ 8,924 հազար ՀՀ դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,115 հազար ՀՀ դրամ):

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրամադրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 17% (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 22.3%) ՀՀ դրամով տրամադրված վարկերի համար և 15.9% (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 17.8%)՝ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի համար:

15.1. Տրամադրված վարկերն ըստ վարկառուների կազմակերպատիրավական տեսակների.

Հազար դրամ	31.12.2013թ.	31.12.2012թ.
Իրավաբանական անձինք	306,883	-
Ֆիզիկական անձինք	248,340	192,026
Ընդամենը համախառն արժեք	555,223	192,026
Արժեզրկումից պահուստ վարկերի գծով (Ծանոթ. 15.3)	(50,202)	(3,607)
Ընդամենը վարկեր և փոխառություններ հաճախորդներին	505,021	188,419

15.2. Տրամադրված վարկերն ըստ վարկավորման սեգմենտների.

Հազար դրամ	31.12.2013թ.	31.12.2012թ.
Հիփոթեքային վարկեր	200,987	169,330
Ավտոմեքենաների ձեռքբերման վարկեր	-	13,597
Սպառողական վարկեր	41,275	9,099
Առողջապահություն	209,956	-
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	6,078	-
Շինարարություն	96,927	-
Ընդամենը համախառն արժեք	555,223	192,026
Արժեզրկումից պահուստ վարկերի գծով (Ծանոթ. 15.3)	(50,202)	(3,607)
Ընդամենը վարկեր և փոխառություններ հաճախորդներին	505,021	188,419

15.3. Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացված են ստորև.

Հազար դրամ	31.12.2013թ.	31.12.2012թ.
Հիփոթեքային վարկեր	200,987	169,330
Ավտոմեքենաների ձեռքբերման վարկեր	-	13,597
Սպառողական վարկեր	41,275	9,099
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	6,078	-
Ընդամենը համախառն արժեք	248,340	192,026
Արժեզրկումից պահուստ վարկերի գծով	(36,470)	(3,607)
Ընդամենը վարկեր և փոխառություններ հաճախորդներին	211,870	188,419

15.4. Վարկերի գծով արժեզրկման պահուստի շարժը հետևյալն է.

Հազար դրամ	Ֆիզիկական անձինք	Իրավաբանական անձինք	Ընդամենը
Առ 01.01.2012թ.	963	-	963
Արժեզրկման կորուստ (հակադարձում)	2,644	-	2,644
Առ 31.12.2012թ.	3,607	-	3,607
Արժեզրկման կորուստ (հակադարձում)	32,863	13,732	46,595
Առ 31.12.2013թ.	36,470	13,732	50,202
Անհատական արժեզրկում	34,958	11,633	46,591
Խմբային արժեզրկում	1,512	2,099	3,611
Ընդամենը արժեզրկում	36,470	13,732	50,202

Վարկային պորտֆելի ժամկետային վերլուծությունը բացահայտված է 25.5.1 ծանոթագրությունում:
 Վարկային պորտֆելին ներհատուկ պարտքային, արժույթային և տոկոսադրույքային ռիսկը բացահայտված է 25.4.1 և 25.4.2 ծանոթագրություններում:

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

16. Հիմնական միջոցներ

Հազար դրամ Արժեք	Կապիտալացված ծախսեր	Դեպոզիտային պահախցիկներ	Համակարգչային տեխնիկա	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Մնացորդն առ 01.01.2012թ. Ձեռքբերում	-	-	3,735	10,202	-	-	13,937
Մնացորդն առ 31.12.2012թ.	-	-	526	56	1,869	-	2,451
	-	-	4,261	10,258	1,869	-	16,388
Մնացորդն առ 01.01.2013թ. Ձեռքբերում	-	-	4,261	10,258	1,869	-	16,388
Մնացորդն առ 31.12.2013թ.	9,777	73,123	403	7,556	-	283	91,142
	9,777	73,123	4,664	17,814	1,869	283	107,530
Մաշվածություն							
Մնացորդն առ 01.01.2012թ. Տարվա մաշվածություն	-	-	3,257	-	-	-	3,257
Մնացորդն առ 31.12.2012թ.	-	-	757	2,050	218	-	3,025
	-	-	4,014	2,050	218	-	6,282
Մնացորդն առ 01.01.2013թ. Տարվա մաշվածություն	-	-	4,014	2,050	218	-	6,282
Մնացորդն առ 31.12.2013թ.	244	1,828	350	2,681	374	86	5,563
	244	1,828	4,363	4,732	592	86	11,845
Հաշվեկշռային արժեք							
Առ 31.12.2012թ.	-	-	247	8,208	1,651	-	10,106
Առ 31.12.2013թ.	9,533	71,295	301	13,082	1,277	197	95,685

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրոյական հաշվեկշռային արժեքով 39 անուն հիմնական միջոցների համախառն հաշվեկշռային արժեքը կազմում է 4,260 հազար դրամ (31.12.2012թ.՝ 33 անուն 3,735 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցների վրա սեփականության իրավունքի սահմանափակումներ առկա չեն:

17. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

Արժեք

Մնացորդն առ 01.01.2012թ.

Ձեռքբերում

Մնացորդն առ 31.12.2012թ.

Մնացորդն առ 01.01.2013թ.

Ձեռքբերում

Մնացորդն առ 31.12.2013թ.

Ամորտիզացիա

Մնացորդն առ 01.01.2012թ.

Տարվա ամորտիզացիա

Մնացորդն առ 31.12.2012թ.

Մնացորդն առ 01.01.2013թ.

Տարվա ամորտիզացիա

Մնացորդն առ 31.12.2013թ.

Հաշվեկշռային արժեք

Առ 31.12.2012թ.

Առ 31.12.2013թ.

Համակարգչային ծրագրեր

Ընդամենը

	-	-
	4,750	4,750
	4,750	4,750
	4,750	4,750
	99	99
	4,849	4,849
	-	-
	237	237
	237	237
	237	237
	500	500
	737	737
	4,513	4,513
	4,112	4,112

18. Այլ ակտիվներ

Հազար դրամ

Կանխավճարներ՝ հիմնական միջոցների ձեռքբերման համար

Կանխավճարներ՝ այլ հարկերի գծով

Նվազագույն շահութահարկ

Այլ կանխավճարներ

Հետաձգված ծախսեր

Այլ ակտիվներ

Ընդամենը համախառն արժեք

Արժեզրկման պահուստ

Ընդամենը այլ ակտիվներ

31.12.2013թ.

31.12.2012թ.

	36,303	115,000
	14,625	469
	590	-
	24	42,844
	416	-
	288	102
	52,246	158,415
	(36,303)	-
	15,943	158,415

Այլ կանխավճարներն իրենցից ներկայացնում են վարձակալված տարածքի կապիտալ վերանորոգման համար կապալառու կազմակերպությանը տրված գումարները, որոնք վարձակալական պայմանագրի համաձայն, ենթակա են վարձավճարների դիմաց հաշվանցման: Վերանորոգման աշխատանքների հանձնում-ընդունումից հետո այդ կանխավճարը դասակարգվել է որպես վարձակալական վճարների դիմաց տրված կանխավճար և հաշվանցվել է վարձակալական վճարների գծով պարտավորությունների դիմաց: Վարձակալական վճարների գծով պարտավորությունների մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է Ծանոթագրություն 20-ում:

31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով տրված կանխավճարներն ամբողջությամբ արժեզրկվել են, քանի որ Ընկերության ղեկավարության գնահատմամբ այդ կանխավճարների հետ ստացման հավանականությունը շատ փոքր է: Կանխավճարների հետ ստացման նպատակով Ընկերության ղեկավարությունը նախատեսում է 2014 թվականին դատական գործընթաց սկսել կապալառու կազմակերպության դեմ (տե՛ս Ծանոթագրություն 23.3):

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

18.1. Դեբիտորական պարտքերի (այդ թվում՝ տրված կանխավճարների) գծով արժեզրկման պահուստի շարժը հետևյալն է.

Հազար դրամ	Իրավաբանական անձինք	Ընդամենը
Առ 01.01.2012թ.	-	-
Արժեզրկման կորուստ (հակադարձում)	-	-
Առ 31.12.2012թ.	-	-
Արժեզրկման կորուստ (հակադարձում)	36,303	36,303
Առ 31.12.2013թ.	36,303	36,303
Անհատական արժեզրկում	36,303	36,303
Խմբային արժեզրկում	-	-
Ընդամենը արժեզրկում	36,303	36,303

19. Բաժնետերերից ստացված փոխառություններ

Հազար դրամ	31.12.2013թ.	31.12.2012թ.
Բաժնետերերից ստացված փոխառություններ	141,256	59,343
Ընդամենը փոխառություններ	141,256	59,343

Փոխառություններն ամբողջությամբ ներգրավված են Ընկերության միակ բաժնետեր Վարդան Վարդանյանից (2012թ.-ին՝ Անդրանիկ Վարդանյանից): 2013թ. օգոստոս ամսին Ընկերության նախկին բաժնետեր Անդրանիկ Վարդանյանն Ընկերության հանդեպ ունեցած պահանջի իրավունքը զիջել է ՀՀ քաղաքացի Վարդան Վարդանյանին, վերջինս փոխառության գումարներն ուղղել է Ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանը՝ ձեռք բերված բաժնետոմսերի դիմաց վճարմանը: Արդյունքում՝ ապաճանաչված փոխառության հաշվեկշռային արժեքի և բաժնետոմսերի տեղաբաշխման գնի միջև բացասական տարբերությունը (հարկային հետևանքները հաշվի առած) ճանաչվել է սեփական կապիտալում՝ «Լրացուցիչ վճարված կապիտալ» հոդվածում:

ՀՀ դրամով փոխառությունները ներգրավված են տարեկան 5% անվանական տոկոսադրույքով, իսկ ԱՄՆ դոլարով փոխառությունները՝ 10% անվանական տոկոսադրույքով: Փոխառությունների գծով ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվել է իրական արժեքով, որը որոշվել է փոխառության գծով վճարվելիք ապագա դրամական հոսքերի զեղչմամբ՝ կիրառելով առևտրային բանկերի կողմից՝ փոխառության ստացման ամսում տրամադրված համապատասխան ժամկետայնությամբ վարկերի միջին տոկոսադրույքները: ՀՀ դրամով ստացված փոխառությունների համար կիրառվել է 15.6%, իսկ ԱՄՆ դոլարով փոխառությունների համար կիրառված զեղչման դրույքների կշռված միջինը կազմում է 11.2%: Անվանական և իրական արժեքների միջև տարբերությունը (ներառյալ հարկային հետևանքները) ճանաչվել է սեփական կապիտալում՝ «Լրացուցիչ վճարված կապիտալ» հոդվածում: Փոխառությունների գծով պարտավորությունը չափվել է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաշվեզրկված տոկոսները ներառվել են ֆինանսական ծախսերում (տե՛ս Ծանոթագրություն 6):

31.12.2013թ. դրությամբ փոխառությունների մնացորդն իրենից ներկայացնում է 2013 թվականի օգոստոս ամսից հետո Ընկերության միակ բաժնետեր Վարդան Վարդանյանից ստացված փոխառությունները:

20. Այլ պարտավորություններ և պահուստներ

Հազար դրամ	31.12.2013թ.	31.12.2012թ.
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	1,159	1,284
Գործակալական պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	72	109
Պարտավորություններ՝ գործառնական վարձակալության գծով	2,423	-
Այլ պարտավորություններ	547	546
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	4,201	1,939

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	427	-
Նվազագույն շահութահարկի գծով պարտավորություն	333	-
Պարտավորություններ՝ աշխատավարձի գծով	695	-
Աուդիտի գծով պահուստ	1,000	800
Չօգտագործված արձակուրդի պահուստ	489	869
Ընդամենը այլ պարտավորություններ և պահուստներ	7,145	3,608

21. Կանոնադրական կապիտալ

Ընկերության գրանցված և համալրված կանոնադրական կապիտալը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 300,000 հազար դրամ, որը կազմված է եղել 300,000 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով: 2013թ. օգոստոսի 15-ին թողարկվել է լրացուցիչ 300,000 հատ բաժնետոմս, որը անվանական արժեքով ձեռք է բերել Ընկերության միակ բաժնետեր Կարդան Վարդանյանը: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 600,000 հազար դրամ, որը բաղկացած է 600,000 հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

22. Լրացուցիչ վճարված կապիտալ

Այս հոդվածն իրենից ներկայացնում է Ընկերության միակ բաժնետիրոջից ստացված երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառության անվանական գումարի և դրա սկզբնական ճանաչման պահին որոշված իրական արժեքի տարբերությունը՝ հաշվի առած հարկային հետևանքերը: 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա փոխառությունների գծով պայմանագրերը վաղաժամ մարվել են, և նշված մարման անվանական գումարի և ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը ճանաչվել է այս հոդվածում: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա փոխառությունների հնարավոր վաղաժամ մարման դեպքում այդ մարման անվանական գումարի և ամորտիզացված արժեքի միջև տարբերությունը նույնպես կճանաչվի այս հոդվածում: (տե՛ս նաև Ծանոթագրություն 19):

Լրացուցիչ կապիտալի շարժը հետևյալն է.

	<u>Ընդամենը</u>
Հազար դրամ	
2012թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Բաժնետիրոջից ստացված երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառության անվանական և սկզբնական ճանաչման պահին որոշված իրական արժեքների տարբերություն	78,224
Հետաձգված հարկային պարտավորություն	(15,645)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	62,579
Փոխառության վաղաժամ ապաճանաչման (կանոնադրական կապիտալին ուղղման) արդյունքում առաջացած՝ մարման գումարի և ամորտիզացված արժեքի տարբերություն	(77,051)
Վաղաժամ մարումից առաջացած տարբերության հարկային հետևանք՝ հետաձգված հարկային պարտավորության նվազում	15,410
2013 թվականին բաժնետիրոջից ստացված երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառության անվանական և սկզբնական ճանաչման պահին որոշված իրական արժեքների տարբերություն	36,565
Հետաձգված հարկային պարտավորություն	(7,313)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,190

23. Պայմանական դեպքեր և հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

23.1. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հաշվետու ժամանակաշրջանից հետո՝ հունվարին և փետրվարին Ընկերության երկու վարկառուներից բռնագանձվել են վարկային պարտավորությունների ապահովման միջոց հանդիսացող երկու բնակարան՝ 18,177 հազ. դրամ չկատարված վարկային պարտավորությունների դիմաց:

23.2. Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

23.3. Դատական գործեր

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ներգրավված է եղել մեկ դատական գործում, որտեղ հանդես է եկել որպես հայցվոր իր վարկառուի հանդեպ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը վարկառուի նկատմամբ հետախուզման վարույթ է հարուցել, Ընկերությունն այդ վարկային պարտավորության ամբողջ գումարը համարել է արժեզրկված: Նշված վարկային պարտավորության գծով արժեզրկման պահուստը կազմել է 14,009 հազար դրամ:

23.4. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում դեռևս աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարրնթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու: Որևէ ժամանակաշրջանի համար ոչ ճիշտ հարկային հաշվետվություն ներկայցնելուն հաջորդող երեք տարին լրանալուց հետո այլևս նոր հարկային պարտավորություններ՝ ներառյալ տույժեր և տուգանքներ, չեն կարող առաջանալ:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

23.5. Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր

Ընկերությունը, կանոնադրության համաձայն, իր գործունեության ընթացքում հաճախորդներին կարող է տրամադրել հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում հաշվեկշռում: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրած երաշխավորություններ և հետհաշվեկշռային ռիսկ պարունակող այլ ֆինանսական գործիքներ չունի:

23.6. Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունն իր բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով կնքել է գրասենյակային տարածքի գործառնական վարձակալության պայմանագիր:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքն ունի հետևյալ տեսքը:

Հազար դրամ	31.12.2013թ.	31.12.2012թ.
Մինչև 1 տարի	2,400	2,400
Ընդամենը գործառնական վարձակալության պարտավորություն	2,400	2,400

Ընկերությունը վաճակալական վճարները փաստացի չի վճարում, այլ դրանց գծով պարտավորությունները հաշվանցում է գրասենյակային տարածքի նորոգման համար կապալառու կազմակերպությանը տրված կանխավճարից (տե՛ս նաև Ծանոթագրություն 18): Ընկերությունը՝ որպես հարկային գործակալ, վարձատուի անունից փաստացի վճարում է միայն վարձակալության գծով առաջացող եկամտային հարկը: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերոնշյալ կանխավճարները սպառվել են, և Ընկերությունը գործառնական վարձակալության գծով ունի 2,180 հազար դրամ չմարված պարտավորություն:

24. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24-ի՝ «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է եղել կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, փոխառությունները և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը միակ բաժնետեր Վարդան Վարդանյանից ստացել է փոխառություններ (տե՛ս Ծանոթագրություն 19):

Գործարքների ծավալները, մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները և ծախսերը անվանական արժեքներով հետևյալն են.

Հազար դրամ	31.12.2013թ.		31.12.2012թ.	
	Բաժնետերեր և փոխ-կապակցված անձինք	Ղեկավար անձնակազմ և փոխկապակցված անձինք	Բաժնետերեր և փոխ-կապակցված անձինք	Ղեկավար անձնակազմ և փոխ-կապակցված անձինք
1) Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, համախառն	-	13,454	-	11,879
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	66,000	13,000	1,300	1,800
Տարվա ընթացքում մարված վարկեր	(66,000)	(13,353)	(1,300)	(225)

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Վարկի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, համախառն	-	13,101	-	13,454
Տոկոսային և նմանատիպ եկամուտ վարկերի գծով	326	2,517	47	953
2) Ստացված փոխառություններ				
Փոխառություններ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	136,271	-	-	-
Փոխառության ստացում	227,867	-	136,271	-
Փոխառության մարում	(186,994)	-	-	-
Փոխառությունների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	177,144	-	136,271	-
Հաշվեգրված տոկոսների մնացորդ	446		1,144	
Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով	6,466		5,650	
3) Այլ ծախսեր				
Վարձակալական ծախսեր	-	-	-	267
Այլ ծախսեր	-	-	-	-

Ղեկավար անձնակազմի գծով հապուցումները ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2013թ.	2012թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	12,497	12,960
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով հատուցումներ	12,497	12,960

25. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

25.1. Ընդհանուր ակնարկ

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անխուսափելի հետևանքն է: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունը: Շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

25.2. Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակը և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող տոկոսադրույքների ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով: Ընկերությունում ռիսկերի կառավարումը իրականացնում է Ընկերության ղեկավար անձնակազմը: Ղեկավարությունը գնահատում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

համագործակցելով Ընկերության գործառնական միավորների հետ՝ դրանց մեղմացմանն ուղղված գործառույթներն իրականացնելու նպատակով:

25.3. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորություններն Ընկերության նկատմամբ: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը կառավարելու համար: Ընկերությունում կարևորագույն խնդիր է վարկերի չվերադարձման ռիսկը կառավարելը: Այդ նպատակով Ընկերության ղեկավարության կողմից մշակվել և հաստատվել է վարկային քաղաքականություն, որը սահմանում է վարկային դիմումների դիտարկման և հաստատման ընթացակարգերը, պայմանագրային կողմերի վճարունակության, գրավի գնահատման մեթոդաբանությունը, վարկային փաստաթղթերի պահանջները, վարկերի և այլ վարկային գործիքների շարունակական վերահսկման ընթացակարգերը:

Ընկերությունը շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով վերագնահատում է իր հաճախորդների վճարունակությունը: Ուսումնասիրությունն իրականացվում է հաճախորդի ամենավերջին ֆինանսական հաշվետվությունների և վարկառուի կողմից տրամադրված կամ Ընկերության կողմից այլ կերպ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա: Գրավի ներկա շուկայական արժեքը կանոնավոր կերպով գնահատվում է կամ անկախ գնահատողի, կամ Ընկերության մասնագետների կողմից:

Ընկերությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև տնտեսական ճյուղերի և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

25.3.1. Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական կենտրոնացումներ

2013 թվականին և 2012 թվականին Ընկերության պարտքային ռիսկերն ամբողջությամբ կենտրոնացված են եղել ՀՀ-ում:

Գործունեության ոլորտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկի կենտրոնացումները համախառն հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ գործունեության ոլորտների:

Հազար դրամ	Սպառողական վարկեր	Հիփոթեքային վարկեր	Ավտո-վարկեր	Առողջապահություն	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	Շինարարություն	Բանկային հաշիվներ	Ընդամենը
Դրամական միջոցներ (Ծանոթ. 14)	-	-	-	-	-	-	1,392	1,392
Հաճախորդներին տրամադրված վարկեր (Ծանոթ. 0)	41,275	200,987	-	209,956	6,078	96,927	-	555,223
2013թ. դեկտեմբերի 31-ին	41,275	200,987	-	209,956	6,078	96,927	1,392	556,615
2012թ. դեկտեմբերի	9,099	169,330	13,597	-	-	-	7,924	199,950

25.3.2. Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը կարգավորում է պարտքային ռիսկի մակարդակները՝ մեկ վարկառուի կամ վարկառուների խմբի գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր սահմանելով:

Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են, և դրանց կառավարումը ենթակա է վերանայման տարեկան կամ ավելի հաճախակի կտրվածքով: Մեկ վարկառուի գծով պարտքային ռիսկը զսպելու նպատակով սահմանվում են վարկի տրամադրման առավելագույն սահմանաչափեր:

Պարտքային ռիսկը նաև կառավարվում է վարկառուների և պոտենցիալ վարկառուների՝ մայր գումարի և տոկոսների վճարման կարողությունը պարբերաբար վերլուծելով և անհրաժեշտության դեպքում՝ վարկի տրամադրման սահմանաչափերը փոխելով:

Պարտքային ռիսկի կենտրոնացումներ

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի տրամադրված վարկերի գծով կենտրոնացում 306,883 հազար դրամ համախառն հաշվեկշռային արժեքով (համախառն պորտֆելի 55%-ը): Այդ վարկերը տրամադրված են երկու վարկառուի: Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 13,731 հազար դրամ:

Ստորև ներկայացված են հատուկ հսկողության և զսպողական մի քանի այլ միջոցներ.

Գրավ և երաշխավորություն

Ընկերությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ պարտքային ռիսկը զսպելու համար: Համընդհանուր գործելակերպ է հանդիսանում տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելը: Ընկերությունը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխառությունների համար ապահովման հիմնական տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը,
- Ընկերությունների շրջանառու ակտիվները, պաշարները և այլ հիմնական միջոցները,
- Ֆիզիկական անձանց շարժական գույքը,
- Երաշխավորությունները:

Ստորև ներկայացվում է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության՝ արտահայտված համախառն հաշվեկշռային արժեքներով՝ (պահուստները չհանած):

Հազար դրամ	31.12.2013թ.	31.12.2012թ.
Անշարժ գույք	517,241	170,421
Շարժական գույք	20,860	799
Երաշխավորություններ	17,122	8,586
Առանց գրավ	-	12,220
Ընդամենը վարկեր և փոխառություններ	555,223	192,026

25.3.3. Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Վարկերի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների ուշացումները, վարկառուների դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային վարկանիշների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունն արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Արժեզրկման անհատական գնահատում

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերությունը որոշում է յուրաքանչյուր անհատապես նշանակալի վարկի կամ փոխառության համապատասխան պահուստի չափն անհատական հիմքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, ֆինանսական դժվարությունները հաղթահարելու կարողությունը, ծրագրված հասույթները, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելիության արժեքը, սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ, եթե չնախատեսված հանգամանքները չեն պահանջում հատուկ ուշադրություն:

Արժեզրկման խմբային գնահատում

Խմբային գնահատումը կատարվում է ոչ նշանակալի վարկերի գծով, ինչպես նաև անհատապես նշանակալի վարկերի և փոխառությունների գծով, որոնց համար դեռ չկան արժեզրկման ակնհայտ հատկանիշներ: Արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա դրությամբ՝ դասակարգված յուրաքանչյուր խմբի համար առանձին:

Խմբային գնահատումը հաշվի է առնում այն արժեզրկման գումարը, որը կարող է առաջանալ վարկային պորտֆելում, նույնիսկ, եթե անհատական գնահատման մեջ արժեզրկման օբյեկտիվ վկայություն չկա: Արժեզրկման կորուստները գնահատվում են՝ հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը. պորտֆելում կորուստների պատմությունը, ընթացիկ տնտեսական իրավիճակը, կորուստն առաջանալու և անհատապես բացահայտվելու մոտավոր ժամկետները, արժեզրկման դեպքում սպասվող վճարումները:

Ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր

Ժամկետանց են համարվում այն վարկերը, որոնց գծով առկա են վարկերի և դրանց գծով հաշվեգրված տոկոսների վճարումների ուշացումներ:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի ժամկետանց, բայց չարժեզրկված վարկեր:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անհատապես արժեզրկված վարկերի գումարը կազմում է 186,808 հազար դրամ (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,771):

25.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների իրական արժեքի կամ դրանից ստացված դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության չափն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ընկերությունը կառավարում է շուկայական ռիսկը՝ սահմանելով բաց դիրքերի սահմանաչափեր ֆինանսական գործիքների, տոկոսադրույքների ժամկետայնության և արտարժույթի դիրքերի գծով, որոնք կանոնավոր կերպով վերահսկվում են:

25.4.1. Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում:

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Ընկերությունը որքանով պետք է ենթարկված լինի փոփոխական, և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Ընկերության համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

Ընկերությունն իր հաճախորդներին փոփոխական տոկոսադրույքով վարկեր չի տրամադրում: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի փոփոխական տոկոսադրույքներով ներգրավված փոխառություններ:

25.4.2. Արտաբյուջային ռիսկ

Արտաբյուջային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտաբյուջայի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով:

Ընկերությունը կիրառում է ողջամիտ պահպանողական քաղաքականություն՝ ուղղված արտաբյուջային ռիսկի մեղմացմանը, որը սահմանվում է որպես արտաբյուջայի փոխարժեքի փոփոխման արդյունքում ֆինանսական գործիքի արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկ: Ընկերությունը կրում է գերակայող արտաբյուջայի (առավելապես առաջին խմբում ներառված արտաբյուջայի) փոխարժեքի տատանման ռիսկն իր ֆինանսական դիրքի և դրամական միջոցների հոսքերի վրա: Ընկերությունը վերահսկում է արտաբյուջային ռիսկը՝ կառավարելով արժույթի բաց դիրքը՝ հիմնված ՀՀ դրամի արժեզրկման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Սակայն, համաշխարհային ֆինանսական շուկայում ԱՄՆ դոլարի փոխարժեքի էական տատանումները կարող են վնաս պատճառել Ընկերությանը: Իր ակտիվների արժեզրկումը կանխարգելելու նպատակով, Ընկերությունը շարունակաբար ավելացնում է վարկային պորտֆելում արտաբյուջայով տրամադրված վարկերի մասնաբաժինը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
	2013թ.	2012թ.	31.12.2013թ.	31.12.2012թ.
Դրամով				
1 ԱՄՆ դոլար	409.54	401.74	405.64	403.58

Ընկերության զուտ ենթարկվածությունն արտաբյուջային ռիսկին հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2013թ.	2012թ.
Դոլարային ակտիվներ և պարտավորություններ		
Ակտիվներ		
Կանխիկ դրամական միջոցներ	503	1,330
Պահանջներ բանկերի նկատմամբ	682	7,326
Հաճախորդներին տրամադրված վարկեր	270,205	182,135
Ընդամենը ակտիվներ	271,390	190,791
Պարտավորություններ		
Փոխառություններ	104,128	15,596
Ընդամենը պարտավորություններ	104,128	15,596
Զուտ ենթարկվածություն	167,262	175,195

2013թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի՝ ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը՝ այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է շահույթի (վնասի) պոտենցիալ զուտ նվազում (աճ), մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս շահույթի (վնասի) պոտենցիալ զուտ աճ (նվազում):

Հազար դրամ		31.12.2013թ.	31.12.2012թ.
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում	Ազդեցությունը շահույթի վրա	Ազդեցությունը շահույթի վրա
ԱՄՆ դոլար	Աճ 5%-ով	8,363	8,760
ԱՄՆ դոլար	Նվազում 5%-ով	(8,363)	(8,760)

25.5. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Ընկերության իրացվելիության վերահսկողությունը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ինչպես նաև ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել իրացվելիության հաշվեկշռային գործակիցները: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է. որքան հնարավոր է, ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Ընկերությունը հաճախ օգտվում է օվերդրաֆտային հնարավորություններից:

25.5.1. Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Ստորև պատկերված աղյուսակը ներկայացնում է ակտիվները և պարտավորությունները՝ ըստ սպասվելիք մարման ժամկետների:

31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ

Հազար դրամ	Ըստ պահանջի և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավել, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ								
Կանխիկ դրամական միջոցներ	924	-	-	924	-	-	-	924
Պահանջներ բանկերի նկատմամբ	1,392	-	-	1,392	-	-	-	1,392
Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	13,198	6,610	63,998	83,806	405,492	15,724	421,216	505,022
Ընդամենը	15,514	6,610	63,998	86,122	405,492	15,724	421,216	507,338
Պարտավորություններ								
Բաժնետերերից ներգրավված փոխառություններ	-	2,650	7,644	10,294	130,962	-	130,962	141,256
Այլ պարտավորություններ	4,201	-	-	4,201	-	-	-	4,201
Ընդամենը	4,201	2,650	7,644	14,495	130,962	-	130,962	145,457
Զուտ դիրք	11,313	3,960	56,354	71,627	274,530	15,724	290,254	361,881
Կուտակային ճեղքվածք	11,313	15,273	71,627	-	346,157	361,881	-	361,881

31 դեկտեմբերի 2012թ. դրությամբ

Հազար դրամ	Ըստ պահանջի և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավել, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ								
Կանխիկ դրամական միջոցներ	1,766	-	-	1,766	-	-	-	1,766
Պահանջներ բանկերի նկատմամբ	7,924	-	-	7,924	-	-	-	7,924
Վարկեր և փոխառություններ հաճախորդներին	2,965	6,770	26,619	36,354	151,918	148	152,066	188,420
Ընդամենը	12,655	6,770	26,619	46,044	151,918	148	152,066	198,110
Պարտավորություններ								
Բաժնետերերից ներգրավված փոխառություններ	200	1,481	19,540	21,221	13,638	24,484	38,122	59,343
Այլ պարտավորություններ	1,939	-	-	1,939	-	-	-	1,939
Ընդամենը	2,139	1,481	19,540	23,160	13,638	24,484	38,122	61,282
Զուտ դիրք	10,534	5,405	7,591	23,530	141,239	(24,336)	116,903	140,433
Կուտակային ճեղքվածք	10,534	15,939	23,530	-	164,769	140,433	-	140,433

25.6. Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկն ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ: Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ընկերության տնօրենների խորհուրդը, գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունն ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում.

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և կորուստների նվազեցման առաջարկվող գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշների մշակում և կիրառում:

25.7. Իրական արժեքներ և հաշվեկշռային արժեքներ

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են՝ դրամական հոսքերի զեղչման մեթոդով՝ հիմք ընդունելով գնահատված ապագա դրամական հոսքերը և նմանատիպ գործիքների համար զեղչման դրույքները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ղեկավարության կարծիքով Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին: Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ ու պատրաստակամ և անկախ կողմերի միջև գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունների օգտագործումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես մի գումար, որը հնարավոր կլինի ստանալ ակտիվների անհապաղ վաճառքից կամ պարտավորությունների մարումից:

26. Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Ընկերությունը համապատասխանի հաստատված արտաքին պահանջներին, և որ Ընկերությունը պահպանի բարձր վարկային վարկանիշ և կապիտալի բարձր նորմատիվներ՝ իր գործունեությունն ամրապնդելու և բաժնետերերի շահույթն առավելագույնի հասցնելու նպատակով: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով:

Ընկերության կապիտալի մեծության նկատմամբ պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված նորմատիվ իրավական ակտերի պահանջների՝ Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափն առ 2013թ. դեկտեմբերի 31-ը պետք է կազմի՝ 150,000 հազար դրամ: Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը, չբաշխված շահույթը՝ այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը, որից կատարվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան նվազեցումները: Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում պահպանել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալին վերաբերող բոլոր պահանջները:

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի չափը՝ հաշվարկված համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար դրամ

31.12.2013թ.

Հիմնական կապիտալ	517,243
Հիմնական կապիտալից նվազեցումներ	(9,532)
Ընդամենը ընդհանուր կապիտալ	507,711

Տնօրեն
Վահրամ Տիտիբյան



Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան